Universal Communications

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, 0025
Սայաթ-Նովա 40/1
Հեռ.՝ (+374) 60 44-44-44
Ֆաքս՝ (+374) 60 44-44-41
Էլ. փոստ՝ info@ucom.am
Վեբ կայք՝ www.ucom.am

"UCOM" LLC
40/1 Sayat-Nova Ave.
Yerevan 0025, Armenia
Phone: (+374) 60 44-44-44
Fax: (+374) 60 44-44-41
E-mail: info@ucom.am
Web: www.ucom.am

0181373

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ
N 099/01/08/2011

ք. Երևան 01 Օգոստոս 2011թ

«Յուքոմ» ՍՊԸ, ի դեմս ընկերության կոմերցիոն տնօրեն՝ Արամ Բաբսեղյանի, որը գործում է N 002 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և ՀՀ Նախագահի Աշխատակազմը ի դեմս գործերի կառավարիչ Վարուժան Գրիգորյանի որը գործում է լիազորագրի հիման վրա, այսուհետ «Բաժանորդ», մյուս կողմից, կողմերը միասին այսուհետ՝ «Կողմեր», իսկ առանձին «Կողմ», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով՝ Օպերատորը պարտավորվում է վճարի դիմաց Բաժանորդին մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայություն/ները, իսկ Բաժանորդը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարել այդ ծառայություն/ների դիմաց:

1.2 Օպերատորը մատուցում է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն/ներ, որոնք նկարագրված են սույն Պայմանագրի Հավելված 1-ում:

1.3 Սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո Օպերատորի կողմից Բաժանորդին է տրամադրվում սարքը/երը (այսուհետ՝ Սարք) Օպերատորի կողմից մատուցվող ծառայություն/ները պատշաճ կերպով ստանալու համար:

1.4 Սույն Պայմանագրի իմաստով «Սարք» է համարվում Օպերատորի կողմից պաշտոնական կայք էջում տեղադրված և նկարագրված այն սարքավորումը կամ սարքավորումները, որոնց վերաբերյալ Օպերատորն առաջարկում է, կամ որոնց միջոցով Օպերատորը կազմակերպում կամ մատուցում է իր ծառայություն/ները:

1.4.1 Օպերատորի սարքը տեղադրելուց, կարգաբերումից և այն Բաժանորդի տիրապետմանը հանձնելուց հետո Բաժանորդի և Օպերատորի միջև կնքվում է «Սարքի հանձնման և ընդունման ակտ», որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը: Օպերատորը

հանդիսանում է Սարքի միակ սեփականատերը: Հետևաբար Բաժանորդը չի կարող այն փոխանցել, վարձակալությամբ տրամադրել կամ փոփոխության ենթարկել որևէ կերպ:

1.4.2 Սարքի/երի տեղադրման, փոփոխման, հանման և սարք/երին առնչվող այլ գործողությունները կատարվում են Օպերատորի և Բաժանորդի միջև երկկողմանի ստորագրված ակտերով, որոնք բոլորը հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

1. 5 Անպարկեշտ վերաբերմունքի, անբարեխիղճ պահպանման, ոչ լիազորված վերանորոգման, Սարքի վրայի տարրերանշանի կանխամտածված ջնջման, փոփոխելու կամ այլ կերպ վնասելու, Սարքի վրա տեղադրված հոլոգրաֆիկ տարրերանշանի վնասման, ինչպես նաև Սարքի անբարեխիղճ տեղափոխման, տեղաշարժման հետևանքով Օպերատորին հասցված բոլոր վնասների հատուցման պարտականությունը կրում է Բաժանորդը:

1. 6 Սույն Պայմանագրի գործողության ընթացքում Սարքի փչացման, վնասման դեպքում որը հետևանք չէ սույն Պայմանագրի 1.5 կետում նախատեսված դեպքերի, Օպերատորն իր միջոցներով իրականացնում է սարքի վերանորոգման, վերականգնման աշխատանքներ, ընդհուպ մինչև Սարքի փոփոխումը: Օպերատորի աշխատակիցների կողմից տեղադրված Սարքերի կարգաբերման, տեղադրման, հանման, ապասարկման և այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացման բացառիկ իրավունքը պատկանում է միայն Օպերատորի լիազորված աշխատակիցներին:

1. 7 Սույն Պայման ապրով սահմանված Ծառայությունների նկարագրության, բանակի և սակագների վերաբերյալ տեղեկությունները նշված են սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում:

1. 8 Սույն Պայմանագրի Հավելվածները, որոնք պատշաճ կերպով կստորագրվեն Կողմերի կողմից, կհանդիսանան սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Օպերատորն իրավունք ունի՝

2.1.1 պահանջել Բաժանորդից Ծառայություններից օգտվել սույն պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան,

2.1.2 Բաժանորդի կողմից վճարի իրականացման ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վճարը,

2.1.3 եթե Բաժանորդը Ծառայություններից օգտվում է Պայմանագրի պայմաններին անհամապատասխան, միակողմանիորեն լուծելու պայմանագիրը,

2.1.4 Բաժանորդից պահանջել վճարելու՝ Պայմանագրով փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց,

2.1.5 սույն պայմանագրի 2.3.2. կետով նախատեսված աշխատանքները կատարելիս ժամանակավորապես (մինչև աշխատանքների ավարտը) կասեցնել մատուցվող ծառայությունները: Սույն կետով սահմանված կասեցումը չի կարող դիտվել կամ ընկալվել որպես մատուցվող ծառայությունների խափանում կամ դադարեցում,

2.1.6 միակողմանիորեն վերանայել մատուցվող ծառայության/ների սակագները և սակագնային փաթեթները՝ այդ մասինառնվազն 30 (երեսուն) օր առաջ տեղեկացնելով Բաժանորդին: Սակագների և սակագնային փաթեթների փոփոխության դեպքում Պայմանագրի Հավելված 1-ում կկատարվեն համապատասխան փոփոխություն/ներ:

2.2. Բաժանորդն իրավունք ունի՝

2.2.1 փոփոխել Օպերատորի կողմից իրեն մատուցվող ծառայությունների ցանկը և սակագնային

2011 © «Յուրոմ» ՍՊԸ

փաթեթները,

2.2.2 պահանջել Օպերատորից Պայմանագրի կնքման պահից սկսած 15 /տասնհինգ/ աշխատանքային օրվա ընթացքում իրեն տրամադրել սույն Պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունները

2.2.3 Օպերատորից պահանջել իրեն տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ մատուցվող ծառայություններից ճիշտ և անվտանգ օգտվելու համար,

2.2.4 Պայմանագրի էական պայմանների խախտման դեպքում վաղաժամկետ լուծելու սույն Պայմանագիրը:

2.3. Օպերատորը պարտավոր է՝

2.3.1 սույն պայմանագրի կնքման պահից սկսած 15 /տասնհինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Բաժանորդին տրամադրել սույն Պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունները,

2.3.2 սարքավորումների, հատկապես համակարգի և ցանցի օգտագործման, շահագործման, կամ այլ անհրաժեշտ պրոֆիլակտիկ տեխնիկական աշխատանքներ (այդ թվում բեռնավորման և անհրաժեշտ կարգաբերման աշխատանքներ) իրականացնելու մասին Բաժանորդին հնարավորության դեպքում տեղեկացնել նախօրոք՝ առնվազն 1 (մեկ) օր առաջ,

2.3.3. տեխնիկապես հնարավոր ամենակարճ ժամկետներում վերացնել համակարգում, ցանցում տեղ գտած թերությունների պատճառով առաջացած աշխատանքների խափանումները,

2.3.4 ապահովել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը,

2.3.5 Ծառայությունները մատուցել պատշաճ ու Բաժանորդի համար ընդունելի որակով,

2.3.6 Բաժանորդի պահանջով հնարավորության դեպքում 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել Ծառայությունների մատուցման ընթացքում հայտնաբերված թերությունները, եթե այդ թերությունները գտնվում են Օպերատորի հսկողության տակ,

2.3.7 տեղեկացնել Բաժանորդին սակագների և սակագնային փաթեթներիփոփոխությունների մասին, առնվազն 30 (երեսուն) օր առաջ տեղեկացնելով Բաժանորդին:

2.4. Բաժանորդը պարտավոր է՝

2.4.1 սույն պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայություններից օգտվել Պայմանագրի պայմաններին համապատասխան,

2.4.2 ժամանակին վճարել մատուցվող ծառայությունների դիմաց,

2.4.3 ողջամիտ ժամկետում կատարել Օպերատորի կարգադրությունները՝ ուղղված իր գործունեության ընթացքում առաջացած այնպիսի իրավիճակների վերացմանը, որոնք վտանգի տակ են դնում սույն պայմանագրի 1.2. կետում նշված Ծառայությունների պատշաճ մատուցումը,

2.4.4. Պայմանագրով սահմանված կարգով վճարել Օպերատորին՝ փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց:

3. Պայմանագրով կատարվող վճարները և այլ դրույթներ

3.1 Սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունների դիմաց հաշվարկվող սակագների վերաբերյալ տեղեկությունները նկարագրված են սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում:

2011 © «Յուրա» ՍՊԸ

3.2 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների վճարման համար հաշվետու ժամանակահատված է համարվում ամիսը:

3.3 Հավելված 1-ով սահմանված ընդհանուր ամսական գումարը վճարվում է ներկայացված հաշիվ ապրանքագրի հիման վրա մինչև այդ ամսվանը հաջորդող մյուս ամսվա 15-ը /տասնհինգը/ ներառյալ:

3.4 Հավելված 1-ով սահմանված ընդհանուր ամսական գումարը Օպերատորին է փոխանցվում անկանխիկ եղանակով՝ վերջինիս բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

3.5 Ծառայության մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) և առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության բարերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 16 /տասնվեց/ ժամը: Ամսական այդ թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամանակահատվածի համար կատարվում է Ծառայության ամսական վճարի պակասեցում, որը հաշվարկվում է հետևյալ ձևով:

$$ՊԳ = \frac{ԾԱԱ \times ԳԺ}{ՄԱԺ}$$

որտեղ՝

ՊԳ-Ծառայության ամսական վճարից պակասեցվող գումար:
ԾԱԱ-Ծառայության ամսական արժեք:
ՄԱԺ-Միջին ամսական ժամերի քանակ, որը հավասար է 729.6 (30.4 /միջին ամսեկան օրերի թիվ/ X 24 /1 օրվա ժամերի քանակ/)
ԳԺ– Ամսական թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամերի քանակ:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում մեղավոր Կողմը հատուցում է մյուս Կողմի կրած վնասները:

4.2 Վնասների հատուցումը Կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

4.3 Եթե պայմանագրով սահմանված ժամկետում Բաժանորդն ուշացնում է վճարի փոխանցումը Օպերատորի հաշվին, Բաժանորդի նկատմամբ հաշվարկվում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար ամսական վճարի 0.1 /զրո ամբողջ մեկ/ տոկոսի չափով:

4.4. Օպերատորը պատասխանատու չէ մատուցվող ծառայությունների ընդհատման հետևանքով Բաժանորդի կրած ուղղակի կամ անուղղակի վնասների (այդ թվում նաև բաց թողնված օգուտի և այլնի) համար, ինչպես նաև եկամտի, շահույթի, ապրանքի կամ այլ անուղղակի կորուստների համար՝ եթե ապացուցվում է, որ Օպերատորը չէր կարող կանխատեսել նման կորուստների հնարավորությունը, և/կամ այդ ծառայությունների ընդհատումը տեղի չի ունեցել Օպերատորի մեղքով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

2011 © «Յուրոմ» ՍՊԸ

5.1 Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնց վրա հասնելու արդյունքում անհնարին է դառնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 /մեկ/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր եղանակով տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. Հատուկ պայմաններ

6.1 Սույն Պայմանագիրը մտնում է ուժի մեջ ստորագրման պահից և գործում է 1/ մեկ / տարի ժամկետով: Պայմանագրի ժամկետի ավարտից հետո, 10 օրվա ընթացքում, կողմերից մեկի նախաձեռնությամբ պայմանագիրը չդադարեցնելու դեպքում այն համարվում է երկարաձգված ևս 1 /մեկ/ տարով և այդպես յուրաքանչյուր անգամ: Սույն Պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կատարվում են Կողմ»ների փոխադարձ համաձայնությամբ գրավոր, ստորագրվում են Կողմերի կողմից և կազմում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.2 Սույն Պայմանագիրը դատարանով կարող է վաղաժամկետ լուծվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով:

6.3 Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Բաժանորդի կողմից այդ մասին Օպերատորին նախապես 30(երեսուն) օր առաջ գրավոր ծանուցելու միջոցով:

6.4 Սույն Պայմանագրի կապակցությամբ և դրանից ծագած բոլոր վեճերը լուծվում են խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների միջոցով՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի վեճի լուծումը հանձնել ՀՀ տարածքում գործող իրավասու դատարանի քննությանը:

6.5 Սույն Պայմանագրում չկանոնավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6 Կողմերից ոչ մեկը իրավունք չունի սույն Պայմանագրի շրջանակներում իր իրավունքները կամ պարտավորությունները փոխանցել որևէ երրորդ անձի՝ առանց մյուս կողմի գրավոր համաձայնության:

6.7 Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7.Կողմերի հասցեները և ստորագրությունները

«Յուքոմ» ՍՊԸ
Իր. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե՝ Սայաթ-Նովա 40/1
հեռ. 374 60 444444
ֆաքս 374 60 444441
ՀՎՀՀ 00024873
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 001,264993.001

կոմերցիոն տնօրեն

Ա. Բաբսեղյան

ՀՀ Նախագահի Աշխատակազմ
ՀՎՀՀ 00006505
հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 26
հեռ՝. 010588728
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011204089

գլխավոր հաշվապահ

Վ. Գրիգորյան

Հավելված 1
«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին»
01.08.2011 կնքված
թիվ 099/01/08/2011
Պայմանագրի

Ծառայության նկարագիրը, քանակը և սակագները

ք. Երևան 01 Օգոստոս 2011թ

1.Տրամադրվող ծառայություն/ներ՝

N	Արագություն / քանակ	Ամսավճար ՀՀ դրամ	Հասցեներ
1	U!TV Full Հեռուստատեսություն	102000	ք. Երևան, Բաղրամյան 26
2	Unet Starter	8000	ք. Երևան, Մամիկոնյանց 2, բն 50

2.Ծառայության/ների սակագները

2.1 Ծառայության ամսական վճարը ներառյալ ԱԱՀ-ն կազմում է 110.000 (հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

«Յուքոմ» ՍՊԸ
Իր. Հասցե ք. Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե Սայաթ-Նովա 40/1
Հեռ. 374 60 444444
Ֆաքս 374 60 444441
ՀՎՀՀ 00024873
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 001-264993-001

կոմերցիոն տնօրեն

Ա. Բալասեդյան

ՀՀ Նախագահի Աշխատակազմ
ՀՎՀՀ 00006505
հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 26
Հեռ՝. 010588728
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 90001429089

Գլխավոր գանձապետ

Ա. Գրիգորյան